

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԲԱՑԸ

Մինչև դարիս երեսնական թվականները ժխտական գերայը որպես ինքնուրույն գերբայական ձև անծանոթ է եղել հայ քերականագիտությանը։ Այն որպես առանձին գերբայ ժամանակակից արևելահայ աշխարհաբար լեզվում ճանաչվել է պլոֆ. դր. Ա. Ղարիբյանի կողմից։

Պրոֆ. դր. Ա. Ղարիբյանը արևելահայ աշխարհաբարի բայի պայմանական եղանակի երկու ժամանակների (ապառնի և անցյալի ապառնի) ժխտական ձևերի կազմության մեջ բայի չփոփոխվող մասը իրավացիորեն համարում է առանձին գերբայ և այդ գերբայի ու ըղձական եղանակի ապառնի ժամանակի եղակի թվի երրորդ գեմքի լոկ ձևական նմանության հիման վրա իր կողմից դիտված դերբային «ըղձական» պայմանական անուն է տալիս։<sup>1</sup>

Խոսքի մեջ այդ գերբայը հանդես է գալիս միայն օժանդակ բայի ժխտական ձևի հետ՝

— «Կխորտակեմ կամարները երկնային,

Ես չեմ քողմի, ես չեմ քողմի զու մեռնիս...»

(Իս, 11, էջ 54):

«Քեզ երբեք սիրտս չի մոռանա,

Իմ մաքուր, առաջին իմ անուրջ...» (ՎՃ, էջ 71).

Այս հանգամանքն էլ ստիպել է հենց իրեն՝ ընկ. Ա. Ղարիբյանին<sup>2</sup> և դոցենտ ընկ. Գ. Սևակին<sup>3</sup> այդ գերբայը անվանակոչելու ավելի ճիշտ ձևով՝ ժխտական գերբայ. սակայն ըղձա-

Տես Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, 5-րդ վերամշակված հրատարակություն, Երևան, 1941 թ., էջ 188.

<sup>2</sup> Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1938 թ., էջ 167.

<sup>3</sup> Դոց. Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Գիրք Ա. Երևան, 1939 թ., էջ 187.

կան գերբայ» անբամինը արգեն իսկ ավանդականություն ստացած լինելով, շարունակվում է գործածվել ժամանակակից արևելահայ աշխարհաբարիքերականության մեջ, Ավելի լավ է ընդունել «Ժխտական» տերմինը, որովհետեւ այն մեծ չափով արտահայտում է այդ գերբայի հիմնական առանձնահատկությունը և, բացի զրանից, հայերենի շատ հատվածներում այդ գերբայը (զրամակայությունը հայերենի այլ հատվածներում մենք ցույց ենք տալիս) «ըզձական» անունը կրելու ձեական միակ հատկանիշն էլ չունի՝ նման չիններով տվյալ լեզվասիտեմի ըղձական եղանակի ապառնի ժամանակի և ոչ մի գեմքին (մենք այդ իր տեղում ցույց կատանք), ուստի «ըզձական» անվան մասին այս դեպքում ոչ մի խոսք լինել չի կարող Ենելով զրանից՝ այսուղ մենք գործածում ենք «Ժխտական գերբայ» տերմինը:

Եղան մարդիկ, որոնք կասկածեցին այդ գերբայի ինքնուրույն գործածության վրա, Այդ մասին պրոֆ. Ա. Ղարիբյանը գրում է՝ «Ծղձական կամ ժխտական գերբայը գործ է ածվում պայմանական եղանակի ժխտական խօնարիման մեջ, ուստի շատերի աչքից իրեն զերբայ վրիպում է: Նույնիսկ շատ շատերը պնդում են, թե հայերենը չունի այդպիսի գերբայ<sup>1</sup>: Պետք է ասել, որ այդ պնդումներն ապարդյուն էին, իսկ լեզվի կենդանի փաստերի վրա հիմնված այդ գերբայի ճանաչումը՝ ճշմարտացի: Ժխտական գերբայի հայոց լեզվի գիտական գերականություն գտավ ժամանակակից հայոց լեզվի գիտական գերականության կողմից և արդեն ուժ տարի շարունակ զիտական գերականության բուհական դասագրքում (զոցենտ Գ. Սեակ, ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա. Երևան, 1939թ.) Ներկայացվում է որպես մեկը ժամանակակից հայոց լեզվի գերբայներից:

Ինչպես ասացինք, պրոֆ. Ա. Ղարիբյանը այդ գերբայը որպես բայի գերբայական յուրահատուկ ձև զիտեց ժամանակակից տրեմելահայ աշխարհաբարում: Կատարվող ուսումնասիրությունները հաստատում են այդ հարցի ճիշտ և գիտական լինելը: Ուսումնասիրելով հայերենի (ոչ միայն ժամանակակից արևելահայ աշխարհաբարիք) ընծայած փաստերը, համարձակ կարելի է հայտարարել, որ հայերենին հատուկ է ժխտական գերբայ, որը բայի եղանակային ձեերի կազմության մեջ (ժխտական խոնարիման դեպքում) զգալի գեր է կատարում:

<sup>1</sup> Ա. Ղարիբյան. Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1938թ., էջ 107.

Հետազոտությունները ցույց են տալիս, որ միջին հայերենում, արևմտանայ աշխարհաբարբաւմ, բարբառներում գոյություն ունի ժխտական (հին անվամբ՝ ըղձական) գերբայ, որի վրա մերքերականագիտությունը ուշադրություն չի դարձրել Դուրս է գալիս, որ հայերենում ժխտական գերբայ չունի միայն գրաբարը:

Ժխտական գերբայը ծագում է անորոշ գերբայից. վերջինս բայի ժխտական խոնարհման մեջ հանդես գալով օժանդակ բայի ժխտական ձեր հետ, հատուկ գործածություն է ստանում և այդ ձեռվ երկար ժամանակ գործածվելով կենդանի լեզվի մեջ, ինքնուրույնանում է, կրում է ձեսկան փոփոխություններ և վեր է ածվում ինքնուրույն գերբայի: Այս գեղաքում անորոշ գերբայի կրած փոփոխությունը վկայում է տվյալ լեզվական ժամանողության մեջ ժխտական գերբայի պահանջի մասին, և այդպիսով առաջանում է նոր գերբայ՝ անորոշ գերբայի տարրերացման հիման վրա:

Մենք այստեղ կփորձենք ցույց տալ ոչ միայն հայերենում ժխտական գերբայի առկայությունը, այլև նրա գոյացման, առաջացման պատկերը:

Միջին հայերենում ժխտական գերբայը հանդսու է գալիս բայի չորս ժամանակների կաղմության մեջ՝ սահմանական եղանակի ներկա ու անցյալի անկատար, պայմանական կամ ենթադրական եղանակի առառնի և անցյալի առառնի ժամանակներում:

Ստիմանական եղանակի ներկա.

«...Զիմ իշուկս կորուսեալ եմ և չեմ զտնուլ»  
(ՄԸՊԲ, էջ 238):

«—Ինչ անեմ, կամ ինչ լինամ,  
Չեմ աւտար՝, ու չեմ մոռանար...» (ԱԲԳՄ, էջ 70):

«—Լուսին, չեմ սիրեմ ըզքեզ,  
Դուն սովոր ես խոռ կենալուն...» (ԱԲԳՄ, էջ 114):  
«Յեր չես երբար ի միտքդ ի վար...» (ՖՐԲ, էջ 176):  
«Ենդէ՞ր յիս չես նայիր...» (ՄՀԱԴ, էջ 167):  
«...Անուշ հուն չի տեսնուր» (ԱԲԺ, էջ 45):

1 Բնդգծել ենք ժխտական գերբայը

## Անցյալի աթիշտար.

«—Գիտիր չեր սիրեր գու զիս,  
Ե՞ր կտոիր՝ «Թարկ զէն, զիս սիրէ» (ԱԲԳՄ, էջ 121),  
«Մէկ մի իւր գուռն կու կենար  
Տառպել, անուն աղքատ Ղաղար:  
Նա չէր ի տար հալաւիկ մի,  
Ոչ հաց մի իւր հոգուն համար» (ՑԲՌ, էջ 177):

Դայտանական կամ ենրադրական եղանակի ապառնի.

«Ու ի զժար տեղ անկանի կամ ի շաղախ խրի, այլ  
ան տեղովն չի զնար» (ՄԸՊԲ, էջ 156),  
«...չին թշնամին նոր սիրելի չի լինիր...»  
(ՄԸՊԲ, էջ 228);  
«Ես կու երթամ զիհ անցաւ այլ չեմ ի հասանիլ»  
(ՄԸՊԲ, էջ 321),  
«...Խոցն չի չորանար, և մինչև չի չորանայ՝  
չի ողջանար» (ԱԲԺ, էջ 285);  
«Զամէնն արորես և յիրար՝ խսոնես՝ անպատճառ որ գուն  
և կու լինի՝ որ ի յայս գուներս չի մնանիր...»  
(ԱԲԺ, էջ 22):

Անցյալի ապառնի.

«...Թէ ունէր սիրտ և ականջ, նա չէր փախչեր յառիւ-  
ծէն...» (ՄԸՊԲ, էջ 7),  
«...Թէ մէկ կտոր լինէր վզին-ոսկորն՝ նա վիզն չէր  
նկիր» (ԱԲԺ, էջ 29),  
«Եւ թէ մարդն վիզ չունենար՝ նա ձայն չէր լինիր»  
(ԱԲԺ, էջ 29),  
«Եւ թէ մի ուն որ հանց նեղ և մութն տեղումն կենար՝  
չէր ապրիլ...» (ԱԲԺ, էջ 27),  
«Թէ լեղուն չի լինար, նա կերակուրն չէր ի շարժիլ  
ի բերանն» (ԱԲԺ, էջ 40):

Հնգգծված օրինակներում մենք ունենք ժխտական գեր-  
րաց, Այստեղ՝ միջին հայերենում ժխտական գերբայը դեռ վերջ-  
նական ձևավորում չունի. այն հանդես է գալիս իրեւ դերբայ՝  
առանց միօրինուկ կերպարանքի, Ասենք, միջին հայերենում քե-  
րականական շատ հասկացություններ տատանվում են տարբեր,

նույնիսկ բազմաթիվ ձևերի միջն, իսկ դա բխում է այդ լեզվի այն ընույթից, որ այդ լեզվուն շուտ կորցնելով իր պատմա-քաղաքական հողը՝ Կիլիկիայի պետականությունը, երկար կյանք չունեցավ, և այդ իսկ պատճառով էլ լեզվական շատ իրողություններ վերջնական ձևավորում չառացան:

Ինչ էլ որ լինի, համենայն գեպս, մենք տեսնում ենք, որ միջին հայերենում ժխտական դերբայի հիմքում ընկած է անորոշ գերբայը կամ, ավելի ճիշտ, այդ գերբայը ծագում է հենց իր՝ միջին հայերենի անորոշ գերբայից: Միջին հայերենում շատ պարզ երևում է այդ գերբայի կազմավորման պրոցեսը. մենք այստեղ կաշխատենք ցույց տալ ժխտական գերբայի ձևավորման ընթացքը: Ահա այդ տեսանկյունից մոտենալով խնդրին, մեր հավաքած փաստերը բաժանում ենք հինգ խմբի, այդ խմբերից յուրաքանչյուրը համարելով ժխտական գերբայի ձևավորման մեկ աստիճան: Այսպես՝

ա) Ի նախդիրով և անորոշ դերբայով.

«Եւ այլ որ գեղն ի յինքն չէ ի հասանել, զի ճանապարհն երկար է. ապա վասն այդ պատճառանացդ այս հիւանդութիւնս զիժար ողջանայ» (ՄԶՄ, էջ 53):

«Ափիմեռինոսն՝ որ է պալղամին ջերմն, ի յար և ի կից լինի, զի ցներքս է իւր բորբոսն և վասն այտոր ի յար է և յերեւան է յանապազ, և չէ ի պակասել, զի յար է և կից» (ՄԶՄ, էջ 110):

«Ապա անուանեցին զայս ջերմս ի յայն տեղին՝ որ չէ ի յերևել, և պակաս է. զի այս անունս լնու զայն զօրն, և զայն տեղին, որ չէ ի յերևեմալ» (ՄԶՄ, էջ 110):

«Չէր ի զիտել» (ՄԾՊԲ, էջ 51): «...Դուռն չէր ի բացվիլ» (ՄԾՊԲ, էջ 304):

«Քարն, ջուրն կամ փողն չեն ի առնուլ»

(ՄԾՊԲ, էջ 306):

«Չեմ ի կամիլ» (ՄԾՊԲ, էջ 310):

«Հանց բնութիւն զինչ մահն ունի չեմ ի մնալ թէ նա խղճայ» (ՖԲԲ, էջ 46):

«Է՞ր չես ի լալ և ապաշխարնել...» (ՖԲԲ, էջ 55):

«Ա՞մ, յէր կու դատինք իզուր, և աստուծոյ ի փոխ չենք. ի տալ» (ՖԲԲ, էջ 91):

Բազլեյան թանգարանի № 21 ձեռագրում՝ «Հենք ի տար»: «Ե՞ր չէք ի զարմանալ, ու կամ հարցուկ լինիլ բանիս...» (Կ. Երզնկացի, ՄՀԱԴ, էջ 31):

«Ոմանք են անհոգի աշերով կուր և անյիմայ,

Որ չեն ի հաւատալ արեգական ու իր լուսոյն» (Կ. Երզնկացի, ՄՀԱԴ, էջ 32):

«Ես չեմ ի հաւատալ այն սուս հոգոյն...» (Կ. Երզնկացի, ՄՀԱԴ, էջ 32):

թ) Այդ նույն ձևով, բայց հնչյունական փոփոխությամբ՝ անորոշ դերայի վերջին և սովորությունը անցնում է և սովորություն:

«Նա չէր ի տար հաղաւիկ մի...» (ՅԲԲ, էջ 177):

«Ես չեմ ի տար հանց պատասխան...» (ՅԲԲ, էջ 202):

«Ճղայ եմ, չեմ ի կենար...» (ԱԲԴԱ, էջ 63):

Այս ձեռ համեմատաբար քիչ է պատահում:

Արդ՝ քնննենք այս ձեռը, ապա կանդրադառնանք մյուս տեսակներին: Նախ նշենք, որ ժխտական դերբայի այսպիսի կազմությունների տմենավագ գործածությանը հանդիպում ենք կարծեցյալ Շաղուհ Բաղրատունու մոտ (10-րդ դար):

«Իշխան Դերեն, չենք աղեկ ի տեսանել զբանակն նոցա, զի կարի ամպոխ են, չէ պարա այս աւը գնալ մեղ առ նոսայ, դարձիր որ երթանք ի կոտորոյ ամբոցն մեր» (ՇԲ, էջ 70):

Պարզ է, որ այս ձեռը ունեցած պիտի լինեն համապատասխան զբական ձեռք: Ամբողջ զբարարում Արսեն Այտընյանը նկատել է անորոշ դերբայով կազմված բայի ժամանակների միայն երկու օրինակ, այն էլ Հովհան Մամիկոնյանի մոտ՝ «Յայրել էք ի տար», «Յոյնք են ի գալ» (Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, էջ 126): Իսկ հատագա շրջանում այդպիսի ձեռ շատ հաճախ են հանդիպում: Օրինակներ՝

«Եւ երբ հիւանդութիւնն եփի, երակ առ, զի մաղձն ի յարիլ լինի» (ՄԶՄ, էջ 119):

«Խասիէթ զիւրական և զառանձին գործն է ի ասել, զոր անուանեն յատուկ» (ՄԶՄ, էջ 133):

«Ապա ասացաք թէ— «առաջի աստուծոյ խօսք մի եմ յա-

սել, որ աստուած լսէ և ապա դու, որ սուտ չկայ ի ներս»  
(Վ. Մեծ, էջ 207),

«Մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռուիլ...»  
(Վ. Մեծ, էջ 208),

«Դառնամ և տեսնում գխէչփառն, թէ ի գալ է»  
(ՄԸՊԵ, էջ 38):

Հայտնի է, որ գրաբարում անորոշ գերբայրով որեէ ժամանակ չի կազմվում. դա հատուկ է բարբառներին: Գրաբարի մեջ թափանցած անորոշ գերբայրով կազմված եղանակային ձեերը բարբառներինն են՝ միայն ստանալով գրաբարյան երանգ: «Դալ են», «տալ են», «կռուիլ են» և այլ ձեերը գրաբարյան մտածողության համար խորթ են, ուստի գրաբարյան մտածողությանը փոքրիշտիկ մոտենալու համար գրանք պետք է որեէ կերպ ըմբռնելի լինեին, իսկ այդ ձեռով դրանք չեին կարող ըմբռնվել, այդ պատճառով էլ ստացել են ի նախղիրը: Իսկ քանի որ միջին հայերենում որոշ չափով դեռ կա գրաբարյան մտածողությունը, ուստի այդ ձեերը կարող էին գրաբարյան երանգավորումով մնալ և յնտեղ: Բայց պարզ երեսում է, որ միջին հայերենում (և ոչ միայն միջին հայերենում) նման կազմություններում ի նախղիրը խորթ է. այդ կարող ենք ցույց տալ թեկուզ, Մխիթար Հերացու «Զրմանց մխիթարութիւն» աշխատությունից վերցված օրինակներում: Մրա առաջին օրինակն է «ի յայրիլ», ուր ի նախղիրը կրկնված է, ուրեմն չի ըմբռնված, երկըորդ օրինակում՝ «ի ապել» ի նախղիրը պիտի լիներ յ (ձայնավորից առաջ): Կամ 13-րդ դարի պատմիչ Վարդան Մեծի<sup>1</sup> «Պատմութիւն տիեզերական»-ում հրատարակչի վկայությամբ բնագրի երկու ձեռագրերից մեկում ոյսելու և ո ի կռուիլ ձեերը առանց նախղիրի են՝ «ասել», «կռուիլ», բացի գրանից՝ նույն հեղինակի մոտ գտնում ենք «հաւատալ եմ որ հանց է»<sup>2</sup>:

Ուրեմն՝ մեր հիշած կազմությունները հատուկ են ժողովը դական լեզուներին, բայց տվյալ գեպքում ստացել են գրաբարյան երանգ (ի նախղիր):

<sup>1</sup> Արդեն հայ բանասիրությունը պարզել է, որ Մ. Էմինը սխալմամբ է «Պատմութիւն տիեզերական»-ը վերագրել Վարդան Բարձրբերղեցուն, այդ աշխատության հեղինակը Մեծ կամ Արևելցի կոչված Վարդանն է:

<sup>2</sup> Մեծին Վարդանայ Բարձրբերղեցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861 թ., էջ 207:

Բնդունում ենք, որ վերելում ցույց արված ժխտական գերբ-  
րայի նախղավոր ձեռքը ծագում են այս մատնանշված ձեռքից,  
բայց այն պատկերացմամբ ենք այդ ընդունում, որ այդ ձեռքը  
հարազատ չեն միջին հայրենին և այդ պատճառով էլ նրանք  
լայն տարածում չստացան և տեղի տվեցին հարազատ ձեռքին:

գ) Անորոշ դերբայի սովորական ձևով՝ դրված օժանդակ  
բայի ժխտական ձեռքի մոտ.

«Եւ տես զայլազգիս որ չեն ուտել...» (ՄԳԴ, էջ 38):

«Զիմ իշուկս կորուսեալ եմ և չեմ գտնուլ»

(ՄԸՊԲ, էջ 238):

«Թրիկ, չունիս խելք իմաստի,

Է՞ր չես լմել դու խրատի...» (ՖԲԲ, էջ 27) — չես լսում:  
«Զրկած եմ երկու կենօք,

Վասն այնոր չեմ ելնել ի հուն» (ՖԲԲ, էջ 40):

«Ահն կու զայ յանկարծակի, այլ չի բողուլ, որ նայ շնչայ»  
(ՖԲԲ, էջ 47):

«Յայս տառըւսրիս վերայ վատն իսկի մարդու չի մընալ»  
(ՖԲԲ, էջ 89):

«Շատ մի փորձեցեր բաներ, քան զաղէկ այլ իրք չի  
մընալ» (ՖԲԲ, էջ 90):

Բողլեյան թանգարանի № 21 և Վեհեննայի ձեսագրատան  
№ 797 ձեռադրերում՝ «չի մնար»:

«Զես ձանձրանալ յիշոցն տալոյ» (ՖԲԲ, էջ 96):

«Աշխարհիս մի հաւատար, զօրն ի բուն գէմ սուտ կու խօսի,  
Զինչ որ խոստանայ մարդուն, չի պահել զիւր խօսքն ի տեղի»  
(Մկրտիչ Նազար, ՄՀԱԴ, էջ 67) — չի պահում:

«Եւ թէ, մի ոմն որ հանց նեղ և մութն տեղումն կենար՝  
չեր ապրիլ...» (ԱԲԺ, էջ 27):

«Մսիկս է լեղի զարձեր,

Ծներուն ձզեմ՝ չեն ուտել» (ԱԲԳՍ, էջ 57):

«...Ատ քո շատ սէրդ չի բողուլ...» (ԱԲԳՍ, էջ 131):

Այս ձեռքում անորոշ գերբայը ոչ մի փոփոխություն չի  
կըսում:

դ) Անորոշ գերբարի փոփոխված ձևով՝ և սոնանտի անցումով  
ու սոնանտի, որը շատ տարածված է միջին հայերենում.

«Զես հաւատաք (ՄԾՊՅ, էջ 12): «...թէ ունէր սիրա և  
ականջ, նա չէր փախչեր յառիւծէն...» (ՄԾՊՅ, էջ 7): «Զի ալ-  
թիր» (ՄԾՊՅ, էջ 101):

«Գէշըն չի մրնար մարդոյ...» (ՖԲԲ, էջ 114):

«Եէր չես երբար ի միտքդ ի վար...» (ՖԲԲ, էջ 176):

«...Եւ յիրար խառնես՝ անզատճառ որ գուն մն կու լինի  
որ ի յայս գոմերս չի նմանիր...» (ԱԲԺ, էջ 22): «Եւ այս սավ-  
տայիս վրան ճանճ չի նստիր...» (ԱԲԺ, էջ 92): «...Մարդուն  
հիմն առանց ոսկերի չի լինիր» (ԱԲԺ, էջ 28):

«Խոցն չի չորնար, և մինչև չի չորնայ՝ չի ողջանար»  
(ԱԲԺ, էջ 285):

«Զես տեսնուր» (ԱԲԺ, էջ 245), «Եւ թէ մարմինն ծակի և  
զեզին ջուր ելնէ՝ նա հրւանդն չի զերծանիր» (ԱԲԺ, էջ 343):  
«Եւ այս դ ցեղն ձեռօք չի նանաչվիր բնաւ» (ԱԲԺ, էջ 407):

«Այլ հասրաթ չի մնար, ով տեսնէ զքեզ» (Մկրտիչ Նաղաշ,  
ՄՀԱԳ, էջ 75):

«Ես քո սիրուն չեմ դիմանար» (16-րդ դար, ՄՀԱԳ,  
էջ 165):

«—Ինչ անեմ, կամ ինչ լինամ,

Զեմ աւատաք ու չեմ մոռանար,

Հազար եար կռւտան փոխան,

Չեմ առնուր ու քեզ չեմ ի տար» (ԱԲԳՍ, էջ 70):

«—Լուսին, չեմ սիրեր<sup>1</sup> ըզքեզ,

Դուն սովոր ես խոռ կենալուն» (ԱԲԳՍ, էջ 114):

«Դիտիր չիր սիրեր գու զիս...» (ԱԲԳՍ, էջ 121):

«...թէ նուշ, թէ շաքար կռւտեմ,

Առանց քեզ չի երբար ի կուլ...» (ԱԲԳՍ, էջ 131):

«—Աղվնը, քեզ բան մի կ' ասեմ,

Հօրդ անուն չեմ իշխեր ասել.

Անոր համար չեմ ասեր...» (ԱԲԳՍ, էջ 146):

<sup>1</sup> «Ես խոնարհման բայերի ժխտական դերբայի այդ ձեզ և զաղակա-  
տար գերբայը իրար նման են:

և) Անորոշ դերբայի և սռնամտի անկումով.

«Նշան այն է, որ հիւանդն ծանր լինի, և շուտ չի զարքի և ի քնուն մէջն շատ զլուցէ...» (ԱԲԺ, էջ 145); «...Բնաւ գեղ չի լինի» (ԱԲԺ, էջ 193):

«—Ամուբ եմ քարիդ նման,  
Որ մըճիկն ի յիս չի բանի.  
Բարձր եմ թուխ ամպիդ նման,  
Որ ոչով ի յիս չի հասնի» (ԱԲԳՍ, էջ 91).

Ժխտական գերբայի այս ձևերը, որ հիշեցնում են արդի արևելահայ աշխարհաբարի ժխտական գերբայը, միջին հայերենում ժխտական գերբայի ձևի փոփոխության վերջին, բայց ոչ բնորոշ աստիճան են կազմում: Միջին հայերենում բերված վաղ շրջանի գործերում մենք այսպիսի ձևերի չենք հանդիպում, դրանք գտնում ենք ուշ շրջանի գործերում (15—16 դարեր) կամ ուշ շրջանում ընդօրինակված ձեռագրերում:

Ժխտական գերբայի գործածության այս հինգ ձևերը միջին հայերենում կիրառության որոշակի սահման չունեն: Համախ նույն հեղինակի մոտ գործածվում են հիշյալ ձևերից երկու կամ ավելի ձևեր, օրինակ՝ Ն. Մառի կողմից հրատարակված 13-րդ դարի նշանավոր հայ առակազիք Վարդան Այգեկցու առակներում գտնում ենք գործածության երեք ձև:

«Չէր ի գիտել» (էջ 51), «չէր ի բացվիլ» (էջ 304), «չեն ի առնուլ» (էջ 306), «չեմ ի կամիլ» (էջ 310)—ըստ մեր դասավորության՝ առաջին տեսակ:

«Չեմ գտնուլ» (էջ 238)—ըստ մեր դասավորության՝ 3-րդ տեսակ:

«Չէր փախչեր» (էջ 7), «չես հաւատար» (էջ 12), «չի այրիը» (էջ 101), «չէր լինիր» (էջ 228)—չորրորդ տեսակ:

13-րդ դարի հայ խոշոր գեմոկրատ բանաստեղծ Թրիկի երկերում<sup>1</sup> գտնում ենք գործածության չորս ձև:

«Չես ի լալ» (էջ 55), «չենք ի տալ» (էջ 202)—Բողլեյան թանգարանի № 21 ձեռագրում՝ «չենք ի տար»—առաջին տեսակ:

<sup>1</sup> Ֆըլիկ, Բանաստեղություններ, հրատ. Մ. Մկրտչյան և Ե. Թոքոսյան, Երևան, 1942 թ.:

«Զէր ի տար» (Էջ 177), «չեմ ի տար» (Էջ 202) — երկրորդ տեսակ:

«Չեմ լսել» — չեմ լսում (Էջ 27), «չեմ ելնել» — (Էջ 40)

«Չի թողուց» (Էջ 47), «չի մընալ» (Էջ 89, 90), (թողլեյան թանգարանի № 21 և Վիեննայի ձեռագրատան № 797 ձեռագրերում՝ «չի մնար»), «չեմ ձանձրանալ» (Էջ 96), — երրորդ տեսակ:

«Չի մընար» (Էջ 114), «չեմ երթար» (Էջ 176) — չորրորդ տեսակ:

Թրիկի մոտ գերակշռում է երրորդ տեսակը՝ անորոշ դերայի անփոփոխ ձեզ օժանդակ բայի ժխտական ձեի մոտ:

15-րդ դարի նշանավոր հայ բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկության»<sup>1</sup> հայտնի աշխատառթյան մեջ կա գործածության չորս ձև՝

«Չէր ի շարժիլ» (Էջ 40) — առաջին տեսակ:

«Չէր ապրիլ» (Էջ 27), «չէր կարել նայիր» (Էջ 29) — երրորդ տեսակ:

«Չի կենար» (Էջ 17), «չի նմանիր» (Էջ 22), «չի լինիր» (Էջ 28), «չէր ճկիր» (Էջ 29), «չէր լինիր» (Էջ 29), «չի տեսնուր» (Էջ 45), «չի նստիր» (Էջ 92), «չիս տեսնուր» (Էջ 245), «չի չորնար» (Էջ 285), «չի ողջանար» (Էջ 285), «չի զերծանիր» (Էջ 343), «չի ճանաչվիր» (Էջ 407) — չորրորդ տեսակ:

«Չի զարթի» (Էջ 145), «չի լինի» (Էջ 193) — հինգերորդ տեսակ:

Ամիրդովլաթ Ամասիացու մոտ բացարձակ գերակշռություն ունի չորրորդ տեսակը՝ անորոշ զերբայլ օժանդակ բայի ժխտական ձեի մոտ՝ և սոնտանալը ը սոնտանալի փոխանցումով, որը և, կարծում ենք, պետք է ընդունել որպես հիմնական և կենտրոնական ձև միջին հայերենի ժխտական գերբայի:

Մենք չենք ժխտում, որ այսպիսի տարբերություններ կարող էին առաջանալ տարբեր գրչությունների հետևանքով. օրինակ, մի երկու օրինակով այդ ցույց տանք Թրիկի մոտ.

«Չի քննել (այստեղ՝ չի քննում) եպիսկոպոս, ոչ վարդապետ, ոչ քահանայ...»

«Չի ասել (այստեղ՝ չի ասում) թէ պարտական է, կամ աղքատ է, կամ տըղայ.»

<sup>1</sup> Ամիրդովլաթ Ամասիա ի ացի, Օգուտ բժշկութեան, առաջին ապրություն, խմբ. Ստ. Մալխանյանց, Երևան, 1940 թ.

«Զի խղճար յօտարականն թող թէ հաղալ դառըն կուլայ»  
(էջ 45), «Զի ասելը ձեզ Բողլեյան թանգարանի № 21 ձեռա-  
գրում կա «չի ասեր» ձեռվլ, իսկ «չի խղճար» ձեզ Բրիտանա-  
կան թանգարանի արևելյան բաժնի № 2622, Բողլեյան թանգա-  
րանի № 21, Ա. Դաղարի մատենագարանի № 235 ձեռագրում  
«չի խղճար» ձեռվլ է, իսկ Երուսաղեմի մատենագարանի № 1070-  
ձեռագրում՝ «չի. խղճար», Այս տարբերությունները,<sup>1</sup> սակայն,  
գուրսո չեն դաշտում ժխտական դերքայի ձեռքի մեր կողմից վերե-  
վում արված գասավորության սահմաններից և մաղաչափ ան-  
դամ չեն վնասում մեր այն թեղը, թե միջին հայերենում գոյու-  
թյուն ունի ժխտական դերքայ:

Մենք հարկ չենք համարում (և միտք էլ չունի) միջին հա-  
յերենով զրված մեր կողմից օգտագործված աղբյուրների մեջ  
դործածված ժխտական դերքայի բոլոր օրինակներն այստեղ ըե-  
րել. բերված օրինակներն էլ միանգամայն բավարար են՝ ցույց  
տալու, որ միջին հայերենի լեզվական մտածողության մեջ գոյու-  
թյուն ունի ժխտական դերքայի գաղափարը: Այստեղ ժխտական  
դերքայը ծագում է անորազ դերքայից, սակայն ձևի տեսակետից  
բազմազանություն ունենալով (նիմոց տեսակ), ձգտում է մի հիմ-  
նական ձևի՝ (չեմ) աւատար, (չեմ) մոռանար, (չեմ) առնուր, (չի)  
տեսնուր, (չի) զերծանիր, (չէր) լինիր, (չես) տեսնուր, (չեմ)՝  
տսիր,<sup>2</sup> (չիր) սիրեր և այլն:

Ասացինք, որ միջին հայերենում ժխտական դերքայը ձեր-  
կողմից բազմազանություն ունի. այդ բազմազանությունը մենք  
հերթեք էլ չենք ընդունում իրրև միջին հայերենի ժխտական  
դերքայի կայուն ձև, այդ մենք զիտում ենք որպես այդ դեր-  
քայի կազմավորման պրոցես, ձեավորման ընթացք, ուր պարզ  
նկատելի է հիմնական ձևի առաջացումը:

Այժմ գանք արևմտահայ աշխարհաբարհին, Այստեղ ևս կա  
ժխտական դերքայ, սակայն այս հատվածի (կամ ընդհանրապես  
հայոց լեզվի) քերականները սրա վրա ուշադրություն չեն դարձ-  
րել և սա չեն ընդունել որպես առանձին դերքայ, թեև հիշա-

<sup>1</sup> Մըանք բերում ենք ըստ Ֆրիկի երկերի հբատաբակիչների տված տե-  
ղեկությունների:

<sup>2</sup> «Ես խոնարհման բայերի ժխտական դերքայի այս ձեռը (չեմ ասեր,  
չի սիրեր) երթեք չպետք է շփոթել նույն բայերի վաղակատար դերքայի հետ,  
որտեղ միտյն ձևական նմտնություն ունեն:

տակում են բայի համապատասխան ժամանակների ժխտական ձևերը, որոնց կազմությունն առանց ժխտական դերբայի պատկերացնելի չէ:

Արևմտահայ աշխարհաբար լեզվի մեծանուն քերական Արևեն Այտընյանը իր «Բննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (1866, Վիեննա) հոչակավոր աշխատության մեջ դրում է՝ «Բայի մը բացասական ձեզ կը շինուի՝ աներեսութին ծայրի և գիրը բաէի փոխելով. այսպէս. լսեր, սորվիր, կարդար, մոռնար:—Զեմ ըներ, չեն ըսեր, փոխուիր, կարդացուիր, մոռցուիր և այլն» (էջ 52).

Խոշոր լեզվաբան-քերականի այդ դիտողությունը շատ ճիշտ է, բայց ձեւական է: Արևմտահայ աշխարհաբար լեզվակի խոսող կամ գրող յուրաքանչյուր մարդ բայի ժխտական ձեզ գործածելիս երբեք չի մտածում՝ վերցնել բայի անորոշ դերբայը և նրա «ծայրի և գիրը բաէի փոխել», այլ նա հենց ուղղակի գործածում է: Իսկ եթե գործածում է, ուրեմն նրա լեզվական մտածողության մեջ կա ժխտական դերբայի դաշտավարը: Այտընյանը օրեկմիվորեն արձանագրում է լեզվի մեջ գոյող իրողությունը, բայց նա ժխտական դերբայի հասկացողությունը չունի: Այնպես որ յուրաքանչյուր ընթերցող Այտընյանի գրքում կդանի ժխտական դերբայով կազմված ձեւեր, իսկ ժխտական դերբայի որպես ինքնուրույն դերբայի մասին՝ ոչ մի խոսք: Արևմտահայ աշխարհաբարի՝ Այտընյանից հետո եկող քերականները ընդհանուր առմամբ հետեւելով Այտընյանին, այս հարցում ես հետեւում են նրան և ժխտական դերբայի մասին ոչ մի խոսք չեն ասում:

Այս դերբայով արևմտահայ աշխարհաբարում կազմվում են բայի ներկա և անցյալի անկատար ժամանակները, իսկ այս ժամանակները արևմտահայերէնում գործածվում են նաև որպես պայմանական եղանակի ժամանակներ, ուրեմն այսպիսով արևմտահայ աշխարհաբարում ևս ժխտական դերբայը հանդես է դալիս ժխտական բնույթի խոնարհման չորս ժամանակների կազմության մեջ:

### «Սահմանական

### Ներկայ

Զեմ լսեր. Զեմ սորվիր. Զեմ կարդաք. Զեմ մոռնար.

Զեմ լսեր. Զեմ սորվիր. Զեմ կարդաք. Զեմ մոռնար.

Զի լսեր. Զի սորվիր. Զի կարդար. Զի մոռնար.  
 Զենք լսեր. Զենք սորվիր. Զենք կարդար. Զենք մոռնար.  
 Զէք լսեր. Զէք սորվիր. Զէք կարդար. Զէք մոռնար.  
 Զեն լսեր. Զէք սորվիր. Զեն կարդար. Զեն մոռնար.

### Աթկատար

Զէք լսեր. Զէք սորվիր. Զէք կարդար. Զէք մոռնար.  
 Զէիր լսեր. Զէիր սորվիր. Զէիր կարդար. Զէիր մոռնար.  
 Զէր լսեր. Զէր սորվիր. Զէր կարդար. Զէր մոռնար.  
 Զէինք լսեր. Զէինք սորվիր. Զէինք կարդար. Զէինք մոռնար.  
 Զէիք լսեր. Զէիք սորվիր. Զէիք կարդար. Զէիք մոռնար.  
 Զէին լսեր. Զէին սորվիր. Զէին կարդար. Զէին մոռնար.

(Քնն. քեր., էջ 83).

Արդեն ասացինք, որ սրանք արևմտահայ աշխարհաբարում ժառայում են նաև որպես պայմանական եղանակի ժամանակներ:

Այս ժամանակներում հանդես եկող լսեր, սորվիր (անցյալում՝ սորվեր), կարդար, մոռնար ձևերը լսել, սորվիր, կարդար, մոռնար բայերի ժխտական դերայներն են, որոնք իրեն դերայ չեն ճանաչվում քերականի կողմից:

Անհրաժեշտ ենք դանում ժխտական՝ դերայի գոյությունը ցույց տալ հենց կենդանի լեզվում.

Ներկա ժամանակի կազմության մեջ՝

«Պարապ տեղ երթալ գալեն չեմ ախործիր» (Զն., էջ 13):  
 «Ինչու չեք անցնիր երթեմն մեր տանը առջևեն»  
 (Զն., էջ 37):

«Իր հմտության մեծությունը չոր ու ցամաք ապառաժի զանգվածին չի նմանիր բնավ» (Զն., էջ 11):

«...Որք իրենց կոխած տեղը չեն նայիր» (ՀՊԾ, էջ 26):

«Սեղանին վրա նյութե լամպարս եմ վառեր, ըսելու համար թե քեզ չեմ մռնար, թե քեզ չեմ մռոցեր» (ՄՄ, էջ 107):

«Բնավ չեմ զարմանար...» (Զն., էջ 56):

«Մինչդեռ դու չես սիրեր զիս...» (ՊԴՏ, էջ 27):

Անցյալի անկատար ժամանակի կազմության մեջ՝

«Գործերը գեշ չեին երբար» (Զն., էջ 9):

«Եղողը կիները չեին քաշեր զինքը...» (Զն., էջ 13):

«Երբեք պաղավարի մը պարապ չէր բռդուր մեզ»

(Զն, էջ 67):

«Պարապ չէին բռդուր զինքը խանութին մեջ...» (Զն, էջ 213):

«Դործածության տեղ չէր գտններ...» (Զն, էջ 213):

«Կը հասկնար թէ չէր հասկնար այս լեզուն» (Զն, էջ 235):

«Զէի նանշնար զինքը» (Զն, էջ 246):

«...Զէի զիտեր ստորագրած թուղթս» (Զն, էջ 249):

Ինչպես տեսնում ենք, արևմտահայ աշխարհաբարում ժխտական գերբայն ունի կայուն ձև (միայն անցյալի անկատարում ի խոնարհիչը փոխվում է ե-ի). այն ծագել է անորոշ գերբայից՝ և սոնանուը ը սոնանտի անցումով: Այսպիսով, մենք կարող ենք խոսել արևմտահայ աշխարհաբարի ոչ միայն ժխտական գերբայի հասկացության մասին, այլև նրա ձևի մասին (Երբար, բաղուր, հասկնար, նմանիր, զարմանար, անցներ, ախսօրմիր, բաշեր, սիրեր): Ե խոնարհման բայերի ժխտական և վաղակատար գերբայները ձևով նման են, սակայն իմաստով բոլորովին տարբեր: այդ տարբերությունը որոշակիորեն հանդես է գալիս կենդանի խոռոշում:

Արդ՝ տեսնենք, թե ինչ պատկեր է ներկայացնում ժխտական գերբայը «Կը» ճյուղի բարբառներում:

Ելնելով ձեռքի տակ ունեցած փաստերից՝ «Կը» ճյուղի բարբառների ժխտական գերբայը ըստ նրա ձեր բաժանում ենք երեք տեսակի: Առաջին տեսակը համընկնում է նույն բարբառի անորոշ գերբայի հետ. ժխտական գերբայի այդպիսի ձև գըտնում ենք՝

Նոր-Նախիջևանի բարբառում.

«Արթըխ պանը ան տէրէճէն հասիլ է վօր՝ ինքըս ինծի չիմ հաւատալ» (Պ. Մատ., էջ 9):

«...Բերանօվը չի ասիլ ամա՝ շմարքօվ, նայվացքօվ քուցուցունէ» (Պ. Մատ., էջ 22):

«Մանտո կեցած քարին տակէն ճուր չի վագիլ» (Պ. Մատ., էջ 27):

«...Մէմալ էտէվըս տառնամ, ինչ տեսնում. աղլի մեր Մայտիրօսը պաղած պուղ կտրած կեցիլ է. աչքը փոսէն չի վերցունուլ» (Պ. Մատ., էջ 2):

«...Զիս տեսնուլ՝ ինչ հալ իմ...» (Պ. Մատ.. էջ 43),

«...Առիչ մէկութ հէչ չէի պաշարիլ տօղին վրայէն տիւզ կըրելու» (Պ. Մատ., էջ 15):

«...Աչքավը չի տեսնէի ու ուրիշն լսէինը՝ հէջ չէի հաւատալ»  
(Ո. Մատ., էջ 8),

«...Իմ ու վարդետիս ձևոքը քովէքօվ չի աընէիր ու աղէկ  
մը չինայէիր՝ շատ ֆոսդ պէքիմ չէիր կուտնուլ ալ» (Ո. Մատ.,  
էջ 17),

«...Ան պանին մէջը մաշենօվ չի մըդնըվիլ» (ԱծՔՆԵԲ,  
էջ 383),

### Համշենի բարբառում.

«...Խէլաց մօգիդ բ'օն մը ասիս նա, չին նավդալ. օնդան ոռ-  
րա էլ զան բ'արիվդ էլ չին առնալ...» (ԱծՔԲ, էջ 195),

Նոր-Նախիջևանի համշենի բարբառների ընծայած այս օրի-  
նակները լավագույց են այն բանի, որ մխտական  
գերբայը ծագում է անորոշ գերբայից:

Նրկրորդ տեսակում անորոշ գերբայի և սոնանտը փոխա-  
րինվում է թ սոնանտով. ժխտական գերբայի այդպիսի ձև  
գտնում ենք՝

### Խարբերդ-Երգնկայի բարբառում.

«Ինչ գէնէ չէնէր՝ չի գըրնըր ադ փուշը հանէր» (ԱծՔԲ,  
էջ 170),

«...Միրտ մը չես կրնար շինիր» (ԱծՔԲ, էջ 172),

### Շապին-Գարահիսարի բարբառում.

«...Ըսի քի. «Բէօ՛ոէս, թքալ էրթանք քիչ մը խաղանք:  
—Չեմ իգար—ըսաց» (ԱծՔԲ, էջ 176),

«—Հըրը ինչմւ աղանդ գ'իգարըդ՝ դախէր էս ու հիդս ալ  
չէս խօրաքեր» (ԱծՔԲ, էջ 176),

«...Քանի մը օր յէգըը ամիս զիս բիդի դրգէ Սդամբօլ. ալ  
յա գը դէսնինք զիրար՝ յա չինք դէսներ» (ԱծՔԲ, էջ 176),

«—Օդօրթմէն զըսէս զար:

—Հըրը սուզմէ՞ն:

—Չիմ ավդար» (ԱծՔԲ, էջ 176),

«Մինչէվ հիսի հէջ աղանդ ձ'ան մը չիգար» (ԱծՔԲ, էջ 176),

### Տրապիզոնի բարբառում.

«...Մէր Մէրքիս աղան փաքէթէն դադ բաշխա թիւթիւն չի  
բանեցունիր» (ԱծՔԲ, էջ 182),

## Մալաքիայի բարբառում.

«Զէմ ուղիր՝ ջէրս թրէք, չիմ գարքըվիր՝ ձոցս դվէք» (Ած՛ք, էջ 197):

«Իշուն չի հասնիր, փալանը դը ձէձէ» (Ած՛ք, էջ 198):

Պալսի բարբառում.<sup>1</sup>

«Հիչ ումմիշ չէի ըներ» (էջ 166):

«—Ես չեմ ուզեր. ան կ'ուզէ» (էջ 171):

«Կը փաթտես կը փաթտես, չը հասնիր» (էջ 178):

(Ախպարը ախպօրը միաը կ'ուտէ. օսկորը մէ քով չը նևտեր» (էջ 180):

«Աշոայ փորելով փոր չի կիշտանար» (էջ 180):

«Ասմէն պանին եավըրուն կը սիրուի, մինակ օձինը չի սիրուիր» (էջ 180):

## Արարկիրի բարբառում.

«Ասմուձու իըյիաձը գէլը չուղեր»<sup>2</sup>—չի ուտի (Ած՛ք, էջ 217):

«Աշգը դէսաձը դիրուն խէր չենիր» (Ած՛ք, էջ 218)—չի անի, նաև՝ չի անում:

«Փըչաձ օջախը ջուր չուղեր» (Ած՛ք, էջ 218)—չի ուղի, նաև՝ չի ուղում:

«Մայը փշէլով (մանր փշըլով) փօր չի գըշդանար» (Ած՛ք, էջ 218):

«Բագը ձուռ է, կօվտ գաթ դօ չի դար» (Ած՛ք, էջ 218):

«Թէք ինգիզին (ընկույզին) քար չին թեղիր» (Ած՛ք, էջ 218):

«Սօխին քարսը (քաղցրը) չիլլար» (Ած՛ք, էջ 218):

## Ակնա բարբառում.

«...Մդիկ չին անիր գինէ գէրթան...» (Ած՛ք, էջ 224):

<sup>1</sup> Պոլսի բարբառի այս օրինակները քաղում ենք Հը. Աճառյանի կողմէից «Աղբաղբական հանդէս»-ում (հտ. թ. 1902, Թիֆլիս) հրատարակված Պոլսի բարբառով գրի առնված «Խուշչներից», որոնք գրված են վոփիլիգած տառադարձությամբ:

<sup>2</sup> Դիտական տառադարձությամբ դիրքայի և խոնարհչը տրված է է -ով, որը նույնությամբ ենք թողնում:

«...Ան մարթէն միս գամ իւրիշ բ'ան մ'առնէք, չեյին առ-  
նիր» (ԱծՀԲ, էջ 224).

«...Զին զբնար ձախէր, ալ չին առներ» (ԱծՀԲ, էջ 224).

### Սերաստիայի բարբառում.

«...Գըսէ, բասավը չավդընար» (ԱծՀԲ, էջ 228).

«...Զէիր ավդընար գօր, զըսէ» (ԱծՀԲ, էջ 229).

«Թաքավէօրը հասգընա գը օր աս դդան է, հեղ մը մյօրուքը  
ձւառքը գ'առնէ, գ'ըլօխը գը փարդէ, ձւան չի հաներ» (ԱծՀԲ,  
էջ 231).

### Նվդոկիայի բարբառում.

«Մարթը հավուն աղվուրգութանը գը հավասի, մըդքէն  
գըսէ քի՝ յէս աս իրինգուն գուն հաց չէմ դանիր, թէք աս իրին-  
գուն անօթի գը գէնանք, իլէ սի հավը գառնիմ» (ԱծՀԲ, էջ 234).

«Էլէլ բարին աչք չի հանիր» (ԱծՀԲ, էջ 238).

### Նիկոմիդիայի բարբառում.

«Օղուլ, էրազով կարօտ չառնուիր, էրկիրմով ալ մուրազ  
չառնուիր» (ԱծՀԲ, էջ 247).

### Բաղեշի ենթաբարբառում.

«Ես եմ խօր անվան մօտէն չիմ ամշնար օր դու ձի էղ  
խօսք կանիս» (ԱծՀԲ, էջ 131).

Նրբորդ տեսակում անորոշ զերբայի վերջին բաղաձայնը (լ)  
դուրս է ընկնում. ժխտական զերբայն այդպիս է՝

### Կարնո բարբառում.

«...Ինչքան կանչէ, ճըլա կը՝ չի դ'ուս գ'ա» (ԱծՀԲ,  
էջ 113).

«Ահ կուտա՛ չի ըլլի, խօստում կ'էնէ՛ չի ըլլի» (ԱծՀԲ, էջ 113).

«...Կանչէի կը ինչի չէիր գա» (ԱծՀԲ, էջ 113).

### Մշո բարբառում.

«—Աբ'օ՛, քո ճոչ կուռք շատ զօրավօր կուռք է, գ'իշէր լէ  
չըր բողնի, օր մենք ընտեղ սըթըրվենք» (ԱծՀԲ, էջ 122).

«...Ես լէ, դ'ու գինաս օր՝ ջղարա չըմ քաշի» (ԱծՀԲ,  
էջ 123—124).

Նույն ձեռվ էլ՝ այս բարբառին պատկանող Մարտունու շրջանի Զորագեղ, Շակքար, Ն. Աղյաման, Զոյքար, Վերին Դյողալդարա գյուղերի խոսվածքներում՝

«—Հայէրուն փարա տըվէր է, մզի չի իտա» (ԱճճԲ, էջ 135)—Զորագեղ:

«Հիմի չինք կտունա մըր տղէկներ պահինք» (ԱճճԲ, էջ 136)—  
Շակքար:

«Էլ մկա չըմ կտունա բ'անի գ'ործի էղնի» (ԱճճԲ, էջ 136)—  
Ն. Աղյաման.

«Տօ չըմ գ'ինա ինչ պատմեմ» (ԱճճԲ, էջ 138)—Զոլաքար:

«...Զընք երթա սար բէր. չընք կտուն, հեռուն ա ճամբախ»  
(ԱճճԲ, էջ 139)—Վերին-Դյողալդարա:

Վանի բարբառում.

«Խէրտ ու մէրտ խալիվորցիր են. յէս ինոնց դարդն չեմ  
կանա քյաշե» (ԱճճԲ, էջ 152):

«Մկա կիւլամ, օր իրեքյ խետ կիւլամ. բա չեմ իլա» (ԱճճԲ,  
էջ 153):

«Էն վախտ կանիծի. իմ լեզուն չորնէր. մկա չեմ անիծե,  
յախու չեմ անիծե» (ԱճճԲ, էջ 154)—Դիտղինի ենթաբարբառ:

Այսպիսի ձեռք գտնում ենք նաև «Մասնա Սոեր»-ում տե-  
ղավորված Մոկաց, Շատախի, Գավաշի ենթաբարբառներով գրի  
առնված տեքստերում:

Մոկաց ենթաբարբառ.

«—Իմ էրեխեն տար խետդ.

Մորամելիք կասի. —Ես չեմ տանի» (ՄԾ, I, էջ 10):

Մորամելիք ասաց. —Դ'արի նստի,

Ասաց. —Ես չեմ նստի, կոկվ անենք» (ՄԾ, I, էջ 28):

Շատախի ննթաբարբառ.

«... Խող եմ, խող չըմ դառնա» (ՄԾ, I, էջ 677):

«... Դու ընձի չըս նանչեա» (ՄԾ, I, էջ 689),

«... Մէեր ձի խասավ. էլ չըմ վախենա» (ՄԾ, I, էջ 695):

Գավաշի ենթաբարբառ.

«Մանասար ասաց. —Պա մ'չըմ ուզի» (ՄԾ, I, էջ 844):

«—Ախպեր, ես չըմ զանի քե...» (ՄԾ, I, էջ 850):

Այս ճյուղի մասցած բարբառներով համապատասխան ընագրեր (մանավանդ գիտական տառագարձությամբ) ձեռքի տակ չունենալով, նրանց մասին լուս ենք:

Ինչպես աենում ենք՝ այս 15 բարբառներում (և մի քանի Կմթարարառներում) ևս կա ժխտական գերբայ, որը միայն երկու բարբառում առանձին ձև չի ստացել՝ Նոր-Նախիջևանի և Համշենի բարբառներում, ժխտական գերբայի ձևը համընկնում է անորոշ գերբայի հետ: Բայց այստեղ ևս նկատում ենք ժըխտական գերբայի համար անորոշ գերբայի տարբերացման տեսքնց, օրինակ, Նոր-Նախիջևանի բարբառում տեղ-տեղ հանդիպում են թ սոնանառով ձեւը՝ «Մամաս-խօմ», վայկիրին, տեղ չերկուտեսար նստելու սիրտին խանուումէն» (Ո. Մատ., Էջ 12): «... Ես չեմ հաւատար տիշըր...» (Ո. Մատ., Էջ 13): «... Աս եարամազը ինձի չի հավթիր» (Ո. Մատ., Էջ 22): Նոր-Նախիջևանի բարբառի այս ձեւը նկատի ունենալով այդ բարբառի ժխտական գերբայի սովորական տեսակին զուգահեռ՝ այլիս ոչ մի կառկած չի մնում այն բանի համար, որ ժխտական գերբայը ծագում է անորոշ գերբայից:

Մնացած բարբառներն այդ գերբայի համար ունեն հատուկ ձև՝ անորոշ գերբայի վերջին և սոնանուը թ սոնանառի անցումով՝ Խարբերդ-Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Մալաթիայի, Պոլսի, Արարկիրի, Ակնա, Սեբաստիայի, Ելգուկիայի, Նիկոմիդիայի բարբառներում և Բաղեշի հնթարբարբառում: թ անորոշ գերբայի լ սոնանառի անկումով՝ Կարնո, Մշո, Վանի բարբառներում և վերջինիս մեջ մտնող Մոկաց, Շատախի, Դավաշի ենթարբարբառներում:

«Եղա ճյուղի բարբառներում ժխտական գերբայը հանդես է գալիս բայի սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակների կազմության մեջ՝ ժխտական խոնարհման գեպքում, իսկ քանի որ այս բարբառներում բայի պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների համար առանձին ձեւը չկան, այլ դրանց համար գարձյալ գործածվում են սահմանական եղանակի ներկան բպայմանականի ապառնի ժամանակի համար) և անցյալի անկատարը (անցյալի ապառնու համար), ուստի նրանց ժխտական ձեւը ևս՝ իրենց կազմում ժխտական գերբայ ունենալով հանդիրձ՝ կարող են փոխարինել հիշյալ ժամանակների ժխտական ձեւին: Այս բանը մենք տեսանք միջին հայերենում և արևմտահայ աշխարհաբարում:

Ժխտական գերբայը հայերեն «Ս» ճյուղի բարբառներում  
ունի հնտևյալ պատկերը.

### Արքվինի բարբառում.

«Հինգ տարի հայա փարա չէմ տա, — ասավ բազազ Արտէմը  
պայման կապէլումը» (ԱՂ, ՀԲՄՆՁ, ՊՀԳԱ, XI, Էջ 46).

«—Զէ, տանուտէր ջան, աս չի զողնա» (ԱՂ, ՀԲՄՆՁ, ՊՀԳԱ,  
XI, Էջ 46); «էդ գօդոն ինչուի 14 տ. չդամանա, նման պսակ չի  
հասնի» (ԱՂ, ՀԲՄՆՁ, ՊՀԳԱ, XI, Էջ 49).

Այս բարբառում անորոշ գերբայի և սոնանտը ժխտական  
գերբայում գուրս է ընկնում, և խոնարհման բայերի խոնարհչը  
դառնում է ի՝ տալ>տա, գողնալ>գողնա, հասնել>հասնի (արդի  
արևելահայ աշխարհաբարի նման):

### Շաղախի բարբառում.

Այս բարբառով գրի առնված տեքստը (միակն է)՝ մի էջից  
քիչ ավելի, պարունակում է ժխտական գերբայի մի օրինակ՝  
«—Զէ, խաղային ՚ջան, ընս տի պթէնէրը արիլ չի...—չի անի»  
(ԱՂ, ՀԲՄՆՁ, ՊՀԳԱ, XI, Էջ 58).

Եթե դատենք այս օրինակից, ապա պիտի ասենք, որ այս  
բարբառում անորոշ գերբայը ժխտական գերբայի համար դեռ  
առանձին ձև չի ստացել:

### Կարմնանի բարբառում.

Այս բարբառում ժխտական գերբայը ձևով հեռացած է ա-  
նորոշ գերբայից՝ անորոշ գերբայի վերջի և սոնանտը գուրս է  
ընկած՝ կյանքիլ>կյանքի, նէլ>նէ, մընալ>մընա, գուլ>գու  
(տես ԱՂ, ՀԲՄՆՁ, ՊՀԳԱ, XI, Էջ 70):

Կարմնանի բարբառում այս գերբայը հանդես է գալիս ըղ-  
ձական-պայմանական, ինչպես նաև հարկադրական եղանակների  
տպառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտական ձեռքի  
մեջ (տես ԱՂ, ՀԲՄՆՁ, ՊՀԳԱ, XI, Էջ 70—71):

### Մեղրու բարբառում.

Այս բարբառի ժխտական գերբայը ձևով նույնանում է  
Կարմնանի բարբառի ժխտական գերբային, այսինքն այստեղ  
էլ ժխտական գերբայը նույն անորոշ գերբայն է և սոնանտի  
անկումով՝ կարգիլ>կարգի, մեալ>մեա, բայց այստեղ այդ գեր-

բայց հարկադրական եղանակի ժամանակների կազմության մեջ հանդես չի գտվու:

### Հադրաւքի բարբառում.

Այստեղ էլ դեռ անորոշ և ժխտական դերբայների տարրերացում չկա, ժխտականի դերում հանգես է գալիս անորոշ դերբայը՝ «ՀՀՆ(Ք) տարէ հալա վող չըմ տալ»—չեմ տա (ԱԴ, ՀԲՄՆՇ, ՊՀԱԱ, XI, էջ 126):

### Ուրմիայի բարբառում.

Այստեղ ժխտականը մեզ ներկայանում է անորոշ դերբայի և սոնանտի անկումով, և և խոնարհման բայերի խոնարհիչն այս դերբայում փոխվում է ի-ի, ինչպես արդի արեելահայ աշխարհաբարում՝ (չեմ) կյիրի, (չեմ) կյանքը (տես ԱԴ, ՀԲՄՆՇ, ՊՀԱԱ, XI, էջ 133):

«Թյանի վուէր մի մարթ մե պան սիրաց,

Թշեր ցերեկյ քյոննը չի տանի» («Թյոռ-օղլի», էջ 44):

«Ամեա թնչ էլ վուէր կանես-չես ամի,

Խիխնա, ինսաֆա ծհոանց չես բողնի» («Թյոռ-օղլի», էջ 60):

«... Մի վախեցի, չեմ սպանի...» («Թյոռ-օղլի», էջ 111):

«... իտ պանը էտես չի մընա» («Թյոռ-օղլի», էջ 112):

Այսպիսով, «Ս» ճյուղի բարբառներում ևս ժխտական դերբայը գոյանում է անորոշ դերբայից, ըստ որում Արթվինի, Կարճեանի, Մեղրու և Ուրմիայի բարբառներում այդ դերբայը ձևով հեռացել է անորոշ դերբայից, իսկ Շաղախի և Հաղութի բարբառներում ժխտական դերբայի դերը կատարում է անորոշ դերբայը՝ առանց որևէ փոփոխության:

«Ս» ճյուղի բարբառների հետազոտող ընկ. Ա. Ղարիբյանը հիշատակում է այս դերբայի մասին (իր մոտ՝ «ըղձական դերբայ» իսկ Մեղրու բարբառի համար՝ «ըղձական-պայմանական դերբայ»):

«Լ» ճյուղի բարբառներում նույնպես կա ժխտական դերբայ, թե Մարաղայի և թե Խոյի բարբառներում ձևով տարբերվում է անորոշից (լ-ի անկում):

### Մարաղայի բարբառում.

«... իթայի նարա ուզիյի, յա կտան, յա չին տա» (ԱՃՔՄԲ, էջ 321):

«... կտաս՝ տու, չիս տու՝ մի տու» (ԱՃՔՄԲ, էջ 322):

«... էլ վիզս էլ կոին, յիս չիմ խաղա» (ԱձՔՄԲ, էջ 357),  
«... Խէրտ մացած ըլէր՝ մկա էտէս չէր ըլը. յիս էլ էտ  
կաղաք փիքիր չեմ էր անի, չիմ էր զուրցա» (ԱձՔՄԲ, էջ 364),  
«... Զիմ բողնը:

— Զիս բողնը՝ մի թօղ» (ԱձՔՄԲ, էջ 368),

«... Մինքյ էլ արադ յա կինի չինքյ էր խըմը» (ԱձՔՄԲ,  
էջ 370).

Խոյի բարբառում.

«—Այ մառթ, տիւ գինաս որ խէտ ախչիգյա ճոշացավ,  
մառթի էթալու խասավ. տունս չի սրփի, չի ավըլի, աման-չա-  
մանսա չի լվա, տուռվէրքյա կեխտոտ կը թօղնի, շատ էլ որ  
խետը իյնես, ղաստէ կզարկի կը կոտուի...» (ԱձՀԲ, էջ 289):  
«... Էտէնց չեն անի...» (ԱձՀԲ, էջ 289): «... Ու վիզս կոէք՝ ճոկ  
մառթու ախչիկ չեմ առնի հառ» (ԱձՀԲ, էջ 289): «... Կուզէք  
էն ի, չէք ուզի՝ կլեմ կլոխ կվերցեմ՝ առէն կեթամ...» (ԱձՀԲ,  
էջ 290):

Օրինակները՝ վկայում են, որ հայերնի ուշ ճյուղի բար-  
բառներում ժխտական դերբայում և սոնանտի անկումից հետո  
ա խոնարհիչը պահպանվում է, իսկ և խոնարհիչը փոխվում է  
իւ-իւ Մարադայի բարբառում այս ի ձայնավորն էլ վերածվում է  
ը-իւ (չեմ) բողնը, (չեմ) բողնը, (չէր) ըլը և այլն: «Եւ ճյուղի այս  
երկու բարբառում ժխտական դերբայը երկան է գալիս միայն  
պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամա-  
նակների ժխտական ձեռքում:

Գալով «Ում» ճյուղի բարբառներին, պիտի ասենք, որ  
այստեղ էլ ժխտական դերբայը ծագում է անորոշ դերբայից և  
հանդես է գալիս բայի ժխտական ընույթի խոնարհման մեջ,  
այն էլ պայմանական եղանակի երկու ժամանակներում: «Ում»  
ճյուղի բարբառներից միայն Թբիլիսիի և Արարատյան բարբառ-  
ներում է, որ անորոշ դերբայը ժխտական դերբայի դիր կատարե-  
լով, ձեի տեսակետից փոփոխություն է կրել Թբիլիսիի բար-  
բառում՝ և սոնանտի անկում բառավերջում:

«Ինչու նրա գալը դիփ մաղեր վուր չըլի, էլ թամամ գինը  
չի տա» (ԳԱ, էջ 93):

«Խալիք վուր խելք ունենա էս անց էլ բան ու գուրձ չի  
ունենա» (ԳԱ, էջ 98):

«Տաքանալով բան չի դառնա ախար» (ԳԱ, էջ 99): «Էտու

Համա է էլ դարդ չէի տնի, ձեզ պես կուպեծներու եղնեն չէի ննդնի» (ԳՄ, էջ 108): «... Վուրդի օր ըլի հենց էս սահաթիս եվեա ճարի, թե չէ էլ հոգով ու մարմառվ ինձեմէն չիս պրծնի...» (ԳՄ, էջ 116): «Ուհ, քիմէն խոս չիմ պրծնի...» (ԳՄ, էջ 122):

Արարատյան բարբառում այդ փոփոխությունը հետեւյալ պատկերն ունի. նախ՝ անորոշ զերբայը ոչ մի հնչյուն չի կորցնում, բայց ունենում ներքին հնչյունափոխություն՝ և խոնարհման բայերի և խոնարհիչը ժխտականում փոխում է ի ձայնավորի. հայտնի է, որ այս բարբառը ունի Յ խոնարհում՝ «էլ» (ել), «իլ», «ալ»<sup>1</sup>, այս բարբառի անորոշ զերբայն ունի էլ (ել) -իր, -ալ մասնիկները, իսկ ժխտական զերբայում արդեն էլ (ել) չկա, այլ գրա փոխարեն կա -իր, և խոնարհիչն անցնում է ի-ի, իսկ մնացած խոնարհիչները (ի, ա) մնում են անփոփոխ որինակներ՝

«Չուրը որ քցիի կընկներ. կրակը քցիի՝ երեսը եղ չէր դարձնիլ» (ԽԱԲ, 1, էջ 116): —դարձնել—դարձնիլ:

«Աղասին քարիցը կկարծեր, նրանից չէր կարծիլ էս բանը»: (ԽԱԲ, 1, էջ 126) —կարծել—կարծիլ:

«... Էղպես հո չեն խփիլ...» (ԽԱԲ, 1, էջ 126) —խփել—խփիլ:

«... Ես քո արինը էղպես էժան չեմ ծալիփիլ...» (ԽԱԲ, 1, էջ 125) —ծախել—ծախիլ:

«Հայոց ազգի կարուտ աչքը վազուց էլ արտասունք չի տեսնիլ, իրան հայրենիքը կտեսնիլ...» (ԽԱԲ, 1, էջ 205) —տեսնել—տեսնիլ:

ի և ա խոնարհիչները անփոփոխ են մնում»

«Սելավ ըլեր՝ մեզ տանիլ չէր» (ԽԱԲ, 1, էջ 122):

«... Զես պրծնիլ չես, թնչ ես մտածում...» (ԽԱԲ, 1, էջ 126):

«... Բայց ես չեմ տալ...» (ԽԱԲ, 1, էջ 125):

«... Ճամփու ընկան. ամա էնպես ճամփով, էնպես տեղով» որ դուքը չէր իմանալ» (ԽԱԲ, 1, էջ 194):

Փոփոխության մյուս տեսակը հայերենի շատ բարբառների համար ընդհանուր բնույթ կրող փոփոխությունն է՝ լ սոնանտի անկում և և խոնարհիչի անցում ի խոնարհիչի. սա նկատելի է Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներում.

«... Ծիտ ա, հո չէզ չի ուտի» (ԱՂՀՀԲ, էջ 176) —ուտել—ուտիլ-ուտի (Փարպիի խոսվածք): Իշքան էլ վազնեմ, չեմ հասնի (Սեանի շրջ. Շահրեիդ գյուղի խոսվածք) —հասնել—հասնիլ—հասնի:

<sup>1</sup> Տես պրֆ. գր. Ա. Դարիբյան, Համառոտություն հայ բարբառադիտության, Երևան, 1941 թ., էջ 173:

Սակայն սա մի նորություն չէ հայերենի համար. սա հատուկ է և շատ բարբառների, ենթարարբառների ու խոսվածքների և արդի արեեյահայ աշխարհաբարին:

«Ում» ճյուղին պատկանող մյուս բարբառներում ժխտական դերբայի գործառնությունն ունեցող անորոշ դերբայը ձեմ կողմից փոփոխություն չի կրում:

Օրինակ՝ Ագուլիսի բարբառում՝ «Ախապար ախպուր մայսը տի ալ, ուսկուռը դին չի ձգիլ» (ՍԱԲ, II, էջ 13), «Եշը թէկելաւ չերի չի դառնիլ» (ՍԱԲ, II, էջ 14), «Մանակ ձերքը ծօփ չի տօլ» (ՍԱԲ, II, էջ 15), «Եշը յիրան տօպրակին զռոլ չի» (ՍԱԲ, II, էջ 14), «Մոյն ձարքաւ արկու մմբարքուկ բռնվիլ չի» (ՍԱԲ, II, էջ 15). Զուղայի բարբառում՝ «Յեթէ ուխտ էլ վէր ընկնի՝ մին ահաթում կկրեն ու իդ ու թօղն չի արեվալ» (ԱՃՆԶ, էջ 319), «Աշխարը ըտենց չի մնալ» (ԱՃՆԶ, 322):

Արեելահայ աշխարհաբար լիզվում ժխտական դերբայն այնպիսի ուղի է անցել, ինչպիս Արարատյան բարբառում։ Նախասովհտական շրջանում պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտական ձեւերի մեջ հանդիս եկող անորոշ դերբայը, որը հետագայում ժխտական դերբայ դարձավ, միայն փոփոխվում էր և խոնարհման բայերում (հիշենք Արարատյան բարբառը), ուր և խոնարհիչը փոխվում էր իւրի. «... Զանները չեն խնայիլ ինձ համար...» (Պռ, I, էջ 11) — խնայել — խնայիլ, «Դժբախտաբար անհծքը չի վերադարձիլ մեր կորուստը» (Մուր., I, էջ 148) — վերադարձնել — վերադարձիլ, «Բայց մենք էլ Սևանից չէինք պահանջիլ՝ այս, ինչ որ տվավ, վենետիկը...» (Մուր., I, էջ 151—152) — պահանջել, — պահանջիլ:

Մյուս խոնարհչները (ի, ա) անփոխ են մնում՝ «—բայց ախար առանց տալու էլ չի լինիլ» (Մուր., I, էջ 135) — լինի — լինիլ; «Չեմ խոսիլ քեզ հիտ...» (ՀԹ, էջ 327) — խոսիլ || խոսիլ: «Սա, իհարկե, չէր ունենալ ս. Ղազարի առավելությունները...» (Մուր., I, էջ 151) — ունենալ || ունենալ: «... թե նա գնաց, էլ ետ չի զալ...» (ՀԹ, էջ 50) — գալ || զալ:

Հետագայում տեղի է ունենում լ սոնանտի անկում։ Պետք է ասել, որ այս երկույթը լայն տարածում ստացավ և դարձավ տիրապետողը, բայց այդ անցյալում էլ կար, օրինակ, Հովհաննես Թումանյանի մոտ գտնում ենք նաև առանց լ սոնանտի ձեր՝ «... Նա ձեղ էնքան շատ է սիրում...»

Նա չի բողնի ձեզ սոված...» (ՀԹ, էջ 32) — փոխար չի թողնիլ:

**Թեև սովետական էտապում արևելահայ աշխարհաբարի ի խոնարհման բայերը ձուլվեցին և խոնարհման բայերի հետ, սակայն ժխտական գերբայում ոչ միտյն ի խոնարհման բայերի ի խոնարհչը պահպանվեց, այլև և խոնարհման բայերի երրորդի փոխանցումը պահպանվեց. սա էլ մի նպաստ էր նոր գերբայի տառջացման՝ (չեմ, չես, չի, չէի, չեր, չեք, չենք, չեն, չեինք, չեիք, չէին) զրի, կարդա:**

**Այսպիսով՝ հետազոտությունները ցույց են տալիս, որ օրինաչափորեն և մասնիկով կազմվող հայերեն համարվող կամ հայերենի մեջ մտնող լեզվախստեմների բայի ժամանակների ժըստական բնույթի խոնարհման մեջ հանդիսաւ կ գտիս խոնարհվող բայը բոլոր դիմերօնաւմ միննույն ձևով, առանց նոր վերջավորություններ ստանալու, եենց դա և միտուական դերբայն է, որը ծագում է անորոշ դերբայից՝ մեծ մասամբ տարբերվելով նրանից կամ տեղ-տեղ և նույնը մնալով։**

**Սովետահայ քերականագիտությունն այդ գերբայը որոշում՝ է այսպիս։**

«Ըղաձական դերբայը ցույց է տալիս մի կատարելիք գործադրության կամ եղելուրյան գաղափար, որի կատարումը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևով։»<sup>1</sup>

**Սա ասված է արևելահայ աշխարհաբարի սովետական էտապի համար և ճիշտ է ասված. իսկ եթե նկատի ունենանք ամբողջ հայերենը, ապա պիտի այս որոշումը որոշ չափով փոփոխենք, ժխտական գերբայը ոկը ճյուղի բարբառներում, միջին հայերենում և արևմտահայ աշխարհաբարում օժանդակ բայի ժխտական ձևի հետ կազմում է նաև ներկա ու անցյալի անկատար ժամանակներ, ուստի այդ գերբայը միայն կատարելիք գործողության դաշտավար ցույց չի տալիս, այլ նաև՝ կատարվող գործողության կամ եղելության գաղափար, կրկնում ենք՝ եթե նկատի ունենանք ամբողջ հայերենը. Ուրեմն՝ ամբողջ հայերենի համար կունենանք ժխտական գերբայի այսպիսի որոշում։**

Ժխտական դերբայը ցույց է տալիս մի գործողության կամ եղելուրյան գաղափար, որի կատարումը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևով։

**Ժխտական գերբայի՝ անորոշ գերբայից առաջանալը ընդհանուր երևույթ է հայերենի համար. դրա համար փաստեր կան-**

<sup>1</sup> ՏԵՌ Ա. Դարերյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք. 5-րդ վերամշակված հրատարակություն, Երևան, 1941 թ., էջ 188.

ըավական վաղ ժամանակվանից՝ «Եւ ասէ արքա(յ)»ն Բարելացոց. տերդմիեցուցանի զքեզ ի խաչ որ ի Վարագ է, չէ՞ս զիս նանաչել (—ինձ չես ճանաչում): Եւ ասէ Դերենն. «Դիտէ աստուած ու իմ սուրբ նշանն, որ չեմ նանաչել (—չեմ ճանաչում) թէ դու ով ես» (ՇԲ, էջ 46):

«... Թէ չէր լեալ սայ՝ չէի ապրիլ» (—չէի ազատվի) (ՇԲ, էջ 46):

«Իմ տանս տէր էմ ու իմ կամացս, զոր սիրեմ զայն առնեմ, թէ չս հանիլ (—չես ճավանում, ախորժում): ուղարկէ ու առ զքոյրն քո» (ՇԲ, էջ 66—67):

«Զիս նանաչել», «չեմ նանաչել», «չէի ապրիլ», «չես հանիլ» ձեերը «կըս մասնիկով կազմվող ժամանակների ժխտական ձեեր են, որոնցից երեքը ներկա ժամանակն են ցույց տալիս, իսկ մեկը՝ «չէի ապրիլ»՝ պայմանական հղանակի անցյալի ապառնի: Թեև հեղինակը առիթ չի ունեցել սահմանականի անցյալի անկատար և պայմանականի ապառնի ժամանակներով այզպիսի ձեեր գործածելու, բայց գործածած օրինակներն էլ ճաստատ ցույց են տալիս, որ հեղինակը պետք է որ իմացած լինի «Կը», ճյուղի որևէ բարբառ, որովհետև, ինչպիս նշել ենք, ժխտական դերբայը ներկա ժամանակ կազմում է միայն «Կը» ճյուղի բարբառաներում կամ առհասարակ այնուեղ, ուր ներկան կազմվում է «կը» մասնիկով: Սրանում չենք կասկածում՝ մանավանդ որ այդ հեղինակի մոտ գտնում ենք «կը» մասնիկով կազմվող բայի ժամանակների գործածության փաստեր:

Եթե ընդունենք, որ Շապուհ Բագրատունուն վերագրվող «Պատմութիւնն»ը Ած-րդ գարի գործ է, ապա կարող ենք ասել, որ ժխտական դերբայի՝ անորոշ դերբայից առաջանալը նոր երեմությ չէ հայերենում:

Օգտագործած աղբյուրների համառոտագրությունները

ԱԲԴՄ—պրոֆ. Դր. Մ. Արեգյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան 1940 թիւ: ԱԲԺ—Ամիրզովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբ. Մտ. Մալիխասյանց, Երևան 1940 թ.: Ա. ՀԲՄՆԾ, ՊՀԳԱ—Ա. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Պատական Համալսարանի «Դիտական աշխատություններ» հտ. 11, Երևան 1939 թ.:

ԱՃՀԲ—Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն-ուրուագիծ և դաստեռութիւն հայ բարբառների (բարբառագիտական քար-

տէղով) — Էմինյան ազգագրական ժողովածու, հա. Ի., Մոսկվա-  
Նոր-Նախիջևան, 1911թ.: Աձնք—Հ. Աճառյան, Քննություն  
Նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1940թ.: ԱձԲՄԲ—Հ. Աճառյան,  
Քննութիւն Մարաղայի բարբառի, Երևան, 1925—30թ.թ.:  
ԱձԲՆՆԲ—Հ. Աճառյան, Քննութիւն Նոր-Նախիջևանի (Խրիմի)  
բարբառի, Երևան, 1925թ.: ԳՍ—Գ. Սունդուկյան, Բնափր եր-  
կեր, Երևան, 1938թ.: ՁՆ—ԴԲ. Զոհրապ, Նովելներ, Երևան  
1941թ.: Իս.—Ավ. Խաչակյան, Բնափր երկեր, Երևան, 1940թ.:  
ԽԱԲ.—Խ. Աբովյան, Բնափր երկեր, հատոր 1-ին, Երևան,  
1939թ.: ՀԹ—Հովհաննես Թումանյան, Երկեր (միհատորյակ),  
Երևան, 1938թ.: ՀՊԾ—Հ. Պարոնյան, Ծիծաղ (Երկերի լիակա-  
տար ժողովածու, հատոր 5-րդ, Երևան, 1935թ.): ՄՀԱԳ—Մ.  
Մկրյան, 13—16-րդ դարերի հայ աշխարհիկ գրականություն,  
Երևան, 1938թ.: ՄՄ—Միսաք Մհերենց, Երկերի լիակատար  
ժողովածու, Երևան, 1934թ.: Մուր—Մուրացան, Բնափր երկեր,  
հա. 1-ին, Երևան, 1935թ.: ՄԶՄ—Մխիթարյա ըժշկապետի Հե-  
րացոյ Զերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832թ.: ՄСՊՎ—  
Марр, Н. Я., Сборник притч Вардана, часть II, С. Петер-  
бург, 1894 г. ՇՅ—Պատմութիւն Շաղնոյ Բաղրատունոյ, ի  
լոյսածին Գ. Տեր-Մկրտչեան և Մեսոր Եպիսկոպոս, Էջմիածին,  
1921թ.: ՊԴՅ—Պետրո Դուբյան, Տաղեր, Երևան, 1932թ.վ.  
П. Мат.—Материалы для изучения армянских наречий,  
выпуск I, говор Нахичеванский, издал К. Натканов, Сайкст-  
петербург, 1875 г. Պռ—Պերճ Պառշյան, Երկեր, հա. 1-ին,  
Երևան, 1939թ.: ՍԱԲ—Մարգիս Մարգիսանց, Ազուլցաց բար-  
բառով (զօկերի լեզուն), մասնա, թ, Մոսկվա, 1883թ.: ՄԾ—  
Մասմա ծոկեր, հա. 1-ին, ընդհանուր խմբագրությամբ պրոֆ.  
դր. Մ. Աբեղյանի, Երևան, 1936թ.վ.: ՎՃ—Վահան Տերյան,  
Բանաստեղծությունների լիակատար ժողովածու, Երևան, 1940թ.:  
ՖԲԲ—Ֆրիկ, Բանաստեղծություններ, կազմեցին Մ. Մկրյան և  
Ե. Թորոսյան, Երևան, 1941թ.: